ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/06

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ կադաստրի կոմիտե
Մասնակից՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ կադաստրի կոմիտեի ներկայացուցիչ՝ Հ. Մանուկյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿԿ-ԳՀԱՊՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցում, այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԿԿ-ԳՀԱՊՁԲ-19/02-01»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/468-2019 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) 13.01.2020թ.-ի թիվ ԳԳ//100-2020 գրության հիման վրա, 16.01.2020թ.-ին «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 16.01.2020թ.-ին:

17.01.2020թ.-ին կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ ու 22.01.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 22.01.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.02.2020թ.-ին:

2. <u>ՀՀ կադաստրի կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ կադաստրի կոմիտեն 13.01.2020թ.-ի թիվ ԳԳ//100-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ Կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպված ԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/02 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում կնքված ԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/02-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցվել է «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին՝ սպանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացվել է թիվ «ԿԿ-ԳՀԱՊՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Ադա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ադա Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/468-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 23.01.2020թ.-ի ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ադա Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է Կադաստրի կոմիտեի կողմից հայտարարված թիվ ԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/02 ծածկագրով գնման ընթացակարգին և ընտրված մասնակից է ճանաչվել 1-ին չափաբաժնի մասով:

Ստորև ներկայացնում ենք 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը՝

Չափաբանին 1- Գործառույթների մատյան (Ձև 4)-400 թերթ

Անհրաժեշտ է տպել 1000 (հազար) հատ մատյան (էջերի քանակը՝ 400 թերթ)

Երկկողմանի սև տպագրություն (կից ներկայացված ձևաչափով)

Չափը՝ 297x210մմ.

Թղթի տեսակը՝ օֆսեթային, 80 գ.

Կազմը՝ կոշտ (2մմ), բումվինիլապատ, թելակար, թերմոսոսինձով

Մատյանը պետք է լինի ծակված, թելով կարված և մատյանի հետևի կազմի վրա ունենա կնիքի համար նախատեսված մաս:

Անհրաժեշտ ֆայլերը կտրվեն պատվիրատուի կողմից:

Մինչև պայմանագրի կնքումը նախնական նմուշը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ:

Որտեղ նշված է՝ «էջերի քանակը՝ 400 թերթ», այսինքն էջերի քանակը պետք է լինի 400:

Համաձայն ՀՀ Բացատրական բառարանի

էջ - բացատրություն

1. Թղթի մեկ կողմը, երես:

Այսինքն, էջերի քանակը 400 նշանակում է թղթի մեկ կողմի քանակը 400, և քանի որ տպագրությունը երկկողմ է, ապա թերթերի քանակը հավասար է 400 / 2 = 200 թերթ:

Նաև տեխնիկական բնութագրում առկա է հետևյալ կետը՝

Մինչև պայմանագրի կնքումը նախնական նմուշը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ:

Մինչև պայմանագրի կնքումը սույն հարցը համաձայնեցվել է պատվիրատուի հետ:

Որպես ապացույց կարող ենք ներկայացնել նաև այն փաստը, որ նույն պատվիրատուի հետ նախորդ պայմանագրով ևս, որի տեխնիկական գնութագիրը ներկայացնում ենք ստորև՝

20.05.2019թ, թիվ ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/04-3 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագիրը՝

Չափաբաժին 3- Գործառույթների մատյանների տպագրման աշխատանքներ (Ձև 4)- 400 թերթ

Անհրաժեշտ է տպել 500 (հինգ հարյուր) հատ մատյան (էջերի քանակը՝ 400 թերթ)

Երկկողմանի սև տպագրություն (կից ներկայացված ձևաչափով)

Չափը՝ 297x 210 մմ.

Թղթի տեսակը՝ օֆսեթային, 80 գ.

Կազմը՝ միակողմանի տպագրություն Կազմը՝ 300 գ., կավճապատ ստվարաթուղթ

Մեջքը բուլվնինապատ թելակար

Մատյանը պետք է լինի ծակված, թելով կարված և մատյանի հետևի կազմի վրա ունենա կնիքի համար նախատեսված մաս:

նույնպես մատակարարվել է Գործառույթների մատյաններ, որի էջերի քանակը եղել է 400, այսինքն 200 թերթ և պատվիրատուն ընդունել է ապրանքը:

Սակայն ԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/02 ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագրի կնքումից հետո, մատակարարման ժամանակ պատվիրատուն հրաժարվեց ընդունել ապրանքը պատճառաբանելով, որ իրենց անհրաժեշտ է Գործառույթների մատյան, որը պարունակում է, ոչ թե 400 էջ, այլ 400 թերթ, այսինքն՝ էջերի քանակը 800, որը հակասում է պայմանագրի տեխնիկական բնութագրին, քանի որ այնտեղ գրված է էջերի քանակը՝ 400:

Կից ներկայացնում ենք մեր գրությունները պատվիրատուին և պատվիրատուի պատասխան գրությունը:

Այսինքն, պատվիրատուն հաստատել է, որ պահանջում է մատյան, որի էջերի քանակը 800 է, մինչդեռ հրավերով և պայմանագրով նշված է, էջերի քանակը 400: Էջի չափման միավոր կարող է լինել «հատ» կամ «կողմ», բայց ոչ «թերթ»: Սա նույնն է, ինչ որ բոլորիս հայտնի «տունը կշռվել եմ, բեյս 1.70 է»:

Գնման ընթացակարգում մենք չենք պահանջել պարզաբանում, քանի որ, կրկնում եմ, նույն պատվիրատուի հետ արդեն իսկ ունեցել ենք պայմանագիր նույն էջերի քանակը՝ 400 թերթ տեխնիկական բնութագրով և մատակարարվել է 500 հատ գործառույթների

մատյան 400 էջ /200 թերթ/ պարունակությամբ, ինչը պատվիրատուն ընդունել է և փոխանցել է պայմանագրի գումարը:

Գտնում ենք, որ պատվիրատուն մեզ անհայտ դրդապատճառներից ելնելով, դիտավորյալ խոչընդոտել է մեր կազմակերպության կողմից պայմանագրի կատարումը:

«Միդա Թեյդ» ՍՊԸ երբեք չի հրաժարվել պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կատարումից, սակայն հանդիպել է խոչընդոտի պատվիրատուի կողմից, որը հրաժարվում է ընդունել ապրանք, որը համապատասխանում է պայմանագրի տեխնիկական բնութագրի, ապրանք, որը նույն տեխնիկական բնութագրով նախկինում մատակարարվել է:

Խնդրում ենք Ձեզ հաշվի առնելով վերոգրյալը, «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/06 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 25.10.2019թ.-ին կնքվել է թիվ «ԿԿ-ԳՀԱՊՁԲ-19/02-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Մասնակիցը պարտավոր էր պայմանագրի հաշվառման պահից սկսած 45 օրացուցային օրվա ընթացքում ք. Երևան, Արշակունյաց 7 հասցեով մատակարարել 1000 հատ գործառույթների մատյան (Ձև 4)-400 թերթ:

www.gnumner.am համացանցային կայքում 26.12.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Կադաստրի կոմիտեի և «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/02-1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Մասնակիցը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը պետք է կատարեր պայմանագրով նախատեսված աշխատանքները, սակայն սահմանված ժամկետում դրանք չեն ներկայացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 7.9-րդ կետը՝ Կադաստրի կոմիտեն 2019 թվականի դեկտեմբերի 25-ին միակողմանի լուծել է թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/02-1» պայմանագիրը:

ՀՀ կադաստրի կոմիտեն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 13.01.2020թ.-ի թիվ ԳԳ//100-2020 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/468-2019 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ կադաստրի կոմիտեի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 25.10.2019թ.-ին կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՊՁԲ-19/02-1» ծածկագրով պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Մասնակիցը պարտավոր

էր պայմանագրի հաշվառման պահից սկսած 45 օրացուցային օրվա ընթացքում ք. Երևան, Արշակունյաց 7 հասցեով մատակարարել 1000 հատ գործառույթների մատյան (Ձև 4)-400 թերթ:

www.gnumner.am համացանցային կայքում 26.12.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Կադաստրի կոմիտեի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/02-1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Մասնակիցը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը պետք է կատարեր պայմանագրով նախատեսված աշխատանքները, սակայն սահմանված ժամկետում դրանք չեն ներկայացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 7.9-րդ կետը՝ Կադաստրի կոմիտեն 2019 թվականի դեկտեմբերի 25-ին միակողմանի լուծել է թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/02-1» պայմանագիրը:

ՀՀ կադաստրի կոմիտեն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 13.01.2020թ.-ի թիվ ԳԳ//100-2020 գրությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 26.12.2019թ.-ին՝ հիմք ընդունելով 2019 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-19/02-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծման մասին ծանուցման հրապարակումը, սակայն Պատվիրատուն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 13.01.2020թ.-ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող

հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով,

չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/468-2019 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/06 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**